Արձանագրություն № 1

էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոնի 2020թ. օգոստոսի 28-ի նիստի:

Ներկա էին Կ.Դանիելյանը, Լ.Ավանեսյանը, Վ.Հովհաննիսյանը, Ռ.Սադոյանը, Ս.Շողերյանը, Ս.Եղիազարյանը,Ա.Գասպարյանը Ա.Թովմասյանը, Տ.Պողոսյանը:

Օրակարգ

1. Ամբիոնում պայմանագրային հիմունքով աշխատողներ Արմեն Գասպարյանի, Սիրինե Շողերյանի, 2020-2021 ուս. տարում ամբիոնում դասախոսական գործունեության շարունակման հարցը:
2. Ուսումնական տարին սկսելու նախապատրաստական աշխատանքների կազմակերպման հարցը:
3. Առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների քննարկման, հաստատման հարցը:
4. Ամբիոնի ծավալի և ծանրաբեռնվածության քննարկում և հաստատում:
5. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ

ամբիոնի պայմանագրային հիմունքով աշխատողներ Արմեն Սանասարի Գասպարյանի, Սիրինե Արմենի Շողերյանի 2020-2021 ուս. տարում ամբիոնում դասախոսական գործունեության շարունակման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

ամբիոնի վարիչ՝ Կ.Դանիելյանը, դոցենտներ՝ Լ.Ավանեսյանը, Վ.Հովհաննիսյանը, Ս.Եղիազարյանը, նշեցին, որ նրանք հմուտ մանկավարժներ են, վայելում են դասախոսական անձնակազմի և ուսանողների հարգանքը, ունեն աշխատանքային փորձ, ծրագրերի, դասախոսությունների մշակման, կուրսային և ավարտական աշխատանքների ղեկավարման, ուսանողների նկատմամբ անհատական մոտեցման հարցերում բարձր պատասխանատվություն:

ՈՐՈՇԵՑԻՆ

միջնորդել համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանին վերոնշյալ դասախոսներին թույլատրելու 2020-2021 ուս.տարում շարունակելու իրենց դասախոսական աշխատանքը էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոնում:

ԼՍԵՑԻՆ

ուսումնական տարին սկսելու նախապատրաստական աշխատանքների կազմակերպման հարցը: Ամբիոնի վարիչ Կ.Դանիելյանը նշեց, որ անհրաժեշտ է կարգի բերել բոլոր այն սարքերը, պլակատներն ու հերբարիումները, որոնք անհրաժեշտ են գործնական և լաբորատոր պարապմունքների համար: Յուրաքանչյուր դասախոս պետք է ունենա իր թղթապանակը, որտեղ կլինեն համակարգչով հավաքված դասընթացների ծրագրերը, դասախոսությունները, քննական տոմսերը, կրիչի հետ միասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

դոցենտները՝ Լ.Ավանեսյանը, Վ.Հովհաննիսյանը, դասախոսներ՝ Ռ. Սադոյանը, Ս.Եղիազարյանը: Նշեցին, որ այս բոլոր աշխատանքները ընթացքի մեջ են և շուտով կներկայացնեն ամբիոն:

ՈՐՈՇԵՑԻՆ

կատարված են բոլոր անհրաժեշտ աշխատանքները նոր ուսումնական տարին սկսելու համար:

ԼՍԵՑԻՆ

2020-2021 ուստարվա էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոնի I կիսամյակի Առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների քննարկման, հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

ամբիոնի վարիչ Կ. Դանիելյանը, դասախոսներ՝ Լ. Ավանեսյանը, Վ. Հովհաննիսյանը, Ս. Եղիազարյանը, Ս. Շողերյանը, Ա. Գասպարյանը նշեցին, որ դասախոսները կատարել են I կիսամյակի համար նախատեսված աշխատանքները: Էլեկտրոնային հարթակում, տեղադրվող բոլոր Առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները իրենց բովանդակությամբ և որակով համապատասխանում են առարկային ներկայացվող պահանջներին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

բոլոր ներկայացրած Առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները երաշխավորել ներբեռնման :

ԼՍԵՑԻՆ

ամբիոնի ծավալի և դասաբաշխման հաստատման հարցը: Ամբիոնի վարիչ Կ.Դանիելյանը ներկայացրեց ընթացիկ ուս. տարվա ամբիոնի ժամաքանակը, Էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոնի 2020-2021 ուս.տարվա ժամաքանակը կազմում է 4999 ժամ, այլ ամբիոններից ստացված է 62 ժամ, թափուր է մնացել է 280ժամ:

Արդյունքում առաջացած 4520 ժամը բաշխվել է հետևյալ կերպ՝

1. Դանիելյան Կարինե Սուրենի՝	ա.գ.դ. պրոֆեսոր	1.0 հաստիք,	720ժ.
2. Ավանեսյան Լյուդմիլա Գրիգորի՝	մ.գ.թ., դոցենտ	1.0 հաստիք,	799ժ.
3. Հովհաննիսյան Վարուժան Ստեփանի՝	կ.գ.դ., պրոֆեսոր	1.0 հաստիք,	741 ժ.
4. Շողերյան Սիրինե Արմենի՝	կ.գ.թ., դոցենտ	1.0 հաստիք,	779ժ.
5. Գասպարյան Արմեն Սանասարի՝	կ.գ.թ., դոցենտ	1.0 հաստիք,	846ժ.
6. Սադոյան Ռուզաննա Ռոբերտի՝	կ.գ.դ., դոցենտ	0.5 հաստիք,	420ժ.
7. Եղիազարյան Սևիլլա Սարիբեկի՝	դոցենտ	0,25 հաստիք,	414ժ.

Թափուր ժամերի քանակը 280 ժամ է:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

դասախոսներ՝ Լ.Ավանեսյանը, Վ,Հովհաննիսյանը, Ս.Շողերյանը, Ռ.Սադոյանը, Ս.Եղիազարյանը,:

ՈՐՈՇԵՑԻՆ

հավանություն տալ ժամաքանակների բաշխվածությանը և ներկայացնել ուսումնական մաս:

ԼՍԵՑԻՆ

ամբիոնի վարիչի տեղակալ Լ.Ավանեսյանի աշխատանքայինպայմանագրի ժամկետը երկարացնելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

ամբիոնի վարիչ՝ Կ.Դանիելյանը, դասախոսներ՝ Վ,Հովհաննիսյանը, Ս.Շողերյանը, Ռ.Սադոյանը, Ս.Եղիազարյանը: Նշեցին, որ Լ.Ավանեսյանը ամբիոնի վարիչի տեղակալի պարտականությունները կատարում է բարեխղճորեն և բարձր պատասխանատվությամբ:

ՈՐՈՇԵՑԻՆ

միջնորդել ռեկտոր Ռուբեն Միրզախանյանին Լ.Ավանեսյանի աշխատանքային պայմանագրի ժամկետը երկարացնել:

Ամբիոնի վարիչ՝ Կ.Դանիելյան

Քարտուղար՝ Ա.Թովմասյան

Արձանագրություն № 2
Էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոնի 2020թ. սեպտեմբերի 25 -ի նիստի

Ներկա էին Կ.Դանիելյանը, Լ.Ավանեսյանը, Վ.Հովհաննիսյանը, Ս.Եղիազարյանը, Ռ.Սադոյանը, Ս.Շողերյանը, Ա.Գասպարյանը Ա.Թովմասյան:

Օրակարգ՝

1. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների հաստատում:
2. Կուրսային աշխատանքների թեմաների հաստատում:
3. Սեզոնային էքսկուրսիաների կազմակերպում:
4. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ

Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների հաստատման հարցը: Ամբիոնի վարիչի պ/կ Ռ.Սադոյանը նշեց, որ 2020-2021 ուս. տարում ամբիոնին տրվել է մագիստրական 6 թեզ, , բակալավրիատի առկա բաժնում 2 ավարտական աշխատանք: Այս աշխատանքները բաշխվել են դասախոսներին հետևյալ սկզբունքով:

Անուն ազգանուն	Մագիստր.թեզ	Ավարտական աշխատանք	
	Առկա	Առկա	Հեռակա
2Լ.Ավանեսյան	2		
3. Հովհաննիսյան Վ.Ս.	3	1	
4.Գասպարյան Ա.Ս.		1	
5.Ս.Շողերյան	1		
6.Ս.Եղիազարյան			
7. Ռ.Սադոյան			

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

ամբիոնի դոցենտներ՝ Լ.Ավանեսյանը, Վ.Հովհաննիսյանը, Ա.Գասպարյան, Ս.Շողերյան, Ս.Եղիազարյան, Ռ.Սադոյանը: Նրանք իրենց ելույթներում նշեցին մագիստրոսական ատենախոսությունների և ավարտական աշխատանքների թեմաները:

Մագիստրատուրա II կուրս

1. Սևանա լճի էկոլոգիական բնութագիրը և դինամիկան էկոլոգիական կրթության համատեքստում:

Դասախոս՝ Վ. Հովհաննիսյան

Ուսանող՝ Հարությունյան Մերի Ռուբենի

2. Կրտսեր դպրոցականների էկոլոգիական մշակույթի ձևավորման առավել արդյունավետ ուղիներն ու միջոցները:

Դասախոս՝ Լ.Ավանեսյան

Ուսանող՝ Մելիքյան Ալիսա Արամայիսի

3. Արարատյան հարթավայրի գերխոնավ տարածքների ողնաշարավոր կենդանիները

Ղեկավար՝Վ.Հովհաննսիյան

Ուսանող՝ Պարունակյան Լևոն Կարենի

4. Կենդանիների ընտանեացումը մարդու կողմից:

Ղեկավար՝Վ. Հովհաննիսյան

Ուսանող՝ Ավետիսյան Նիկոլայ Հակոբի

5. Սննդային հավելումների հիմնախնդիրը դպրոցականների սննդակարգում:

Դասախոս՝ Լ.Ավանեսյան

Ուսանող՝ Մինասյան Ժաննա Բաբկենի

6. <<Մտավոր ծանրաբեռնվածության ազդեցությունը ուսանողների սիրտ-անոթային համակարգի և ֆիզիոլոգիական որոշ ցուցանիշների վրա>>:

Դասախոս՝ Ս.Շողերյան

Ուսանող՝ Անիկյան Դիաննա Կամոյի

Առկա բակալավր IV կուրս

1. Ազատ գետի ավազանի դեղաբույսերը:

Կատարող – Խաչատրյան Անուշիկ Աշոտի

Ղեկավար - Արմեն Գասպարյան

2. Սևանա լճի ավազանի ջրա-ճահճային թռչունների կենսաբազմազանությունը և էկոլոգիան:

Կատարող – Խաչատրյան Մարինե Սարգսի

Ղեկավար - Վարուժան Հովհաննիսյան

ՈՐՈՇԵՑԻՆ

Ընդունել ի գիտություն

կուրսային աշխատանքների թեմաների հաստատման հարցը: Ամբիոնի վարիչ Կ. Դանիելյանը նշեց, որ ամբիոնում կուրսային աշխատանքներ ղեկավարելու են Ս.Սաղոյանը, Ս.Եղիազարյան հետևյալ թեմաներով՝

Կենդանիների էկոլոգիա

1. Միջավայրը և օրգանիզմի զարգացումը:
2. Ապրելու միջավայրը և տեղաշարժման հիմնական եղանակները թռչունների մոտ:
3. Ապրելու միջավայրը և կերի հայթայթման եղանակները թռչունների մոտ:
4. Ձկների էկոլոգիան և տնտեսական նշանակությունը:
5. Երկկենցաղների էկոլոգիան, ծագումը և նշանակությունը:
6. Սողուններիի էկոլոգիան, ծագումը և նշանակությունը:
7. Թռչունների էկոլոգիան, ծագումը և նշանակությունը:
8. Կաթնասունների էկոլոգիան, ծագումը և նշանակությունը:
9. Կենդանի բարոմետրեր, խոնավաչափեր, սեյսմոգրաֆներ:
10. Կենդանիների պաշտպանական հատկությունները:

Գրականություն

1. Б.Токин – Общая эмбриология, Москва, 1970г. стр.355-381
2. Л.Шультин – Орнитология, Ленинград . 1940г., стр.166-194
3. Л.Шультин – Орнитология, Ленинград . 1940г., стр.194-210
4. С.Наумов – Зоология позвоночных, Москва, 1982г. стр. 83-111
5. С.Наумов – Зоология позвоночных, Москва, 1982г. стр. 137-152
6. С.Наумов – Зоология позвоночных, Москва, 1982г. стр. 182-201
7. С.Наумов – Зоология позвоночных, Москва, 1982г. стр. 257-281
8. С.Наумов – Зоология позвоночных, Москва, 1982г. стр. 366-400
9. И.Литинецкий – Бионика, Москва, 1976г. срт. 121-139
10. Х.Котт – Приспособительная окраска животных, Москва, 1950г. стр.287-298

Ընդհանուր էկոլոգիա

1. Ջրային և ցամաքային էկոհամակարգեր:
2. Հիդրոբիոնտների սնուցումը:
3. Քաղաքային միջավայրի յուրահատկությունը:
4. Էկոլոգիական իրավիճակը և ազգաբնակչության առողջությունը:
5. Էկոհամակարգերի քայքայումը անապատներում:

6. Մարդու տեղը կենսոլորտային գործընթացներում, նրա և մյուս կենդանի օրգանիզմների միջև գոյություն ունեցող տարբերությունները:
7. Մարդու շրջակա միջավայրի առանձնահատկությունները և վիճակը:

<u>Գրականություն</u>

1. Константинов, стр.152
2. Воронков,, стр.279-295
3. Воронков,, стр.323-339
4. Воронков,, стр.365-385
5. Воронков,, стр.115-130
6. Воронков,, стр.131-147

<u>Էկոլոգիայի դասավանդման մեթոդիկա</u>

1. Քննադատական մտածողության համակարգը:
2. Քննադատական մտածողության խթանման մեթոդներ:
3. Համագործակցային ուսուցում:
4. Էկոլոգիայի դասավանդման ավանդական և ինտեռակտիվ մեթոդներ:
5. Ընթերցանությունը, գրավոր աշխատանքները և քննարկումները էկոլոգիայի դասավանդման գործընթացում:
6. Դերային խաղերը էկոլոգիայի ուսուցման դասընթացում:
7. Էկոլոգիական կրթական ծրագրերի իրականացման մանկավարժական համակարգը:

<u>Գրականություն</u>

1. Ջինի Լ.Սթիլ, Քուրթիա Ս., Մերեդիթ և Չարլզ Թեմփլ §Քննադատական մտածողություն¦ Երևան 2010թ.
2. Ամիջանյան Յու. Մանկավարժ, Երևան 2004թ.
3. Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ Երևան 2008թ. §Ան-Ջոն¦

ՈՐՈՇԵՑԻՆ

կուրսային աշխատանքները ուսանողներին հանձնարարել ժամանակին և հետևել ընթացքին:

ԼՍԵՑԻՆ

Շրջակա միջավայրի գիտություներ բաժնի ուսանողների սեզոնային էքսկուրսիա տանելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

դոցենտներ՝ Լ. Ավանեսյանը, Վ.Հովհաննիսյանը, Ռ.Սաղոյանը, Ա.Գասպարյանը, Ս.Շողերյանը: Նշեցին, որ էկոլոգիա և բնապահպանության բաժնի բոլոր կուրսերի

արդյունավետ ուսուցումը ապահովելու համար խիստ անհրաժեշտ են սեզոնային էքսկուրսիաները դեպի հանրապետության տարբեր վայրեր: Այդ էքսկուրսիաները հնարավորություն են տալիս ուսանողներին ծանոթանալու ՀՀ տարբեր մարզերի կենսաբազմազանությանը և բնակլիմայական պայմաններին:

ՈՐՈՇԵՑԻՆ

Շրջակա միջավայրի գիտություններ բաժնի ուսանողների համար ամբիոնի դասախոսների ղեկավարությամբ կազմակերպել էքսկուրսիա դեպի Ստեփանավանի դենտրոպարկ, Խոսրովի արգելոց և Դիլիջանի ազգային պարկ, Դիլիջանի “Թումո” կենտրոն և ԱՅԲ դպրոց, Ջերմուկ, Վայք,Նորավանք:

Ամբիոնի վարիչի պ/կ Ռ:Սադոյան

քարտուղար Ա.Թովմասյան

Արձանագրություն № 3

Էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոնի, 2020թ. հոկտեմբերի 23-ի նիստի:

Ներկա էին Լ.Ավանեսյանը, Վ.Հովհաննիսյանը, Ռ.Սադոյանը, Ս.Եղիազարյանը, Ա.Գասպարյանը , Ս.Շողերյանը, Ա.Թովմասյան, Տ.Պողոսյանը:

Օրակարգ՝

1. Դասալսումների քննարկում և գնահատում:
2. Ուսումնական պրակտիկայի ընթացքը:
3. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ

դասալսումների արդյունքների մասին ամբիոնի վարիչ Ռ.Սադոյան հաղորդումը: Նա նշեց, որ ամբիոնում անց են կացվել փոխադարձ դասալսումներ: Դասախոսները իրենց աշխատանքի նկատմամբ ունեն բարձր պատասխանատվություն: Լեկցիաները, սեմինարները, լաբորատոր և գործնական պարապմունքները անց են կացվում ըստ առարկայական ծրագրերի և օրացույցային պլանների: Ամբիոնի դասախոսները դասերը անց են կացնում բարձր մակարդակով, նրանք գրագետ են, բանիմաց և պարտաճանաչ: Դասալսումների ընթացքում դասախոսները դրսևորել են գիտելիքների խորը և լայն իմացություն, հստակ արտահայտված է եղել դասի պլանավորումը, նպատակը, դասախոսի անկողմնակալ հարգալից և արդարացի վերաբերմունքը ուսանողի նկատմամբ: Օգտագործվող մեթոդները, ստեղծված բարենպաստ միջավայրը և ժամանակի ճիշտ օգտագործումը նպաստավոր է եղել դասի իրականացման համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

դոցենտներ՝Ռ.Սադոյանը Լ. Ավանեսյանը, Ա.Գասպարյանը, Վ.Հովհաննիսյանը, Ս. Շողերյանը, Ս.Եղիազարյանը: Նրանք իրենց ելույթներում նշեցին, որ գոհ են փոխադարձ դասալսումներից, հստակ տրվում էր դասի թեման, նպատակը, տրված ժամանակահատվածում լավ ներկայացվում էր դասի կառուցվածքը և տարբեր մասերի կենսագործումը: Այս դասալսումները և քննարկումները հատկապես կարևոր են սկսնակ, երիտասարդ դասախոսների համար:

ՈՐՈՇԵՑԻՆ

ամբիոնի դասախոսների աշխատանքը բավարարում է լիարժեք դասի անցկացման պահանջված չափանիշներին:

ԼՍԵՑԻՆ

Ամբիոնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողներին մասնագիտական պրակտիկայի անցկացման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՎԵՑԻՆ

մեթոդիստ Լ.Ավանեսյանը նշ»ó, áñ 2-րդ կուրսի մագիստրոսները իրենց մասնագիտական պրակտիկան կանցկացնեն ՀՀ ԳԱԱ <Հայ կենսատեխնոլոգիա գիտաարտադրական միավորման սպորավոր բակտերիաների հետազոտման լաբորատորիայում> : Պրակտիկայի ընթացքում ուսանողները կծանոթանան սպորավոր էնտոմոպաթոգեն (միջատասպան) բակտերիաների խմբերին, որոնց օգնությամբ կհետազոտեն վնասատու միատների վրա դրանց ազդեցությանը: Կծանոթանան բակտերիաների հետ աշխատելու կանոնների, վարակի մեթոդների, ինչպես նաև վարակից մահացած միջատներից մաքուր ծտամների ստացման մեթոդներին:

ՈՐՈՇԵՑԻՆ

երաշխավորել մագիստրոսների 2-րդ կուրսի մասնագիտական պրակտիկան անցկացնել ՀՀ ԳԱԱ <Հայ կենսատեխնոլոգիա գիտաարտադրական միավորման սպորավոր բակտերիաների հետազոտման լաբորատորիայում> :

Ամբիոնի վարիչի պ/կ Ռ. Սադոյան

քարտուղար՝ Ա.Թովմասյան

Արձանագրություն № 4

Էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոնի 2020թ. Նոյեմբերի 19-ի նիստի:

Ներկա էին, Լ.Ավանեսյանը, Վ.Հովհաննիսյանը, Ռ. Սադոյանը, Ս.Եղիազարյանը, Ս.Շողերյան, Ա. Գասպարյանը, Տ.Պողոսյան, Ա.Թովմասյանը:

Օրակարգ

1. Առաջին կիսամյակի ընթացիկ ստուգումներ և ինքնուրույն աշխատանքների ամփոփում:
2. Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ

առաջին կիսամյակի ընթացիկ ստուգումների և ինքնուրույն աշխատանքների ամփոփման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

դոցենտներ՝ Լ. Ավանեսյանը, Վ.Հովհաննիսյանը, Ս.Եղիազարյանը, Ռ.Սադոյանը: Իրենց ելույթներում նշեցին, որ առաջին գրավոր աշխատանքները գրվել են, ստուգվում և գնահատվում են: Հանձնարարվել և հետևել նաև ինքնուրույն աշխատանքների կատարմանը և ստուգումը և գնահատելը կատարել դեկանատի կողմից ներկայցված գրաֆիկով: Ամբիոնի վարիչ Ռ. Սադոյանը և դասախոսները նշեցին, որ բակալավրիատում և մագիսրատուրայում դասավանդվող բոլոր դասընթացներից անց է կացվել գրավոր աշխատանք: Աշխատանքները ստուգվել և գնահատվել են :

ՈՐՈՇԵՑԻՆ

գնահատված աշխատանքների արդյունքները ներկայացնել դեկանատ:

ԼՍԵՑԻՆ

ժասավանդվող դասընթացների հարցաշարերի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

Ամբիոնի դասախոսները ներկայացրեցին իրենց դասավանդվող առարկաների հարցաշարերը: Նշվեց, որ ներկայացված հարցաշարերը համապատասխանում են դասընթացների բովանդակությանը ,և ներկայացված պահանջներին:

ՈՐՈՇԵՑԻՆ-

հաստատել հարցաշարերը:

ԼՍԵՑԻՆ

ամբիոնի վարիչի պ/կ Ռ. Սադոյանի հաղորդումը դասալսումների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ –

Սադոյանը նշեց, որ փոխադարձ դասալսումները ցույց են տվել, որ ամբիոնի դասախոսները պարտաճանաչ են և ունեն պատասխանատվության բարձր զգացում են իրենց աշխատանքի նկարտմամբ. Դասախոսություններն անցկացվում են ըստ նախապես կազմված ծրագրի: Յուրաքանչյուր դասախոսություն ուղեկցվում է PP ծրագրով կազմված սահիկահանդեսով, որի մեջ ընդգրկում են ոչ միայն համապատասխան բովանդակությամբ նկարներ այլև տեսաֆիլմեր: Վերջիններն ուսանողների համար ավելի մատչելի են դարձնում ուսուցանվող նյութը և ուղղորդում ուսանողներին դիտելու հեռուստատեսությամբ ցուցադրվող բնության մասին ֆիլմերը: Դասախոսները ճիշտ պլանավորում են դասը, դրսևորում իրենց գիտելիքները, ուսանողների մեջ արթնացնում հետաքրքրասիրություն առարկայի նկատմամբ: Դասախոսության ընթացքում կիրառված մեթոդները, ժամանակի արդյունավետ օգտագործումը, ստեղծված բարենպաստ միջավայրը ապահովում են ուսանողների կողմից գիտելիքների յուրացումը:

ՈՐՈՇԵՑԻՆ-

որ փոխադարձ դասալսումները օգտակար են ամբիոնում աշխատող դասախոսների համար և նրանց մղում է քննարկումներ անցկացնել տարբեր թեմաների դասավանդման հարցերի շուրջ:

Ամբիոնի պ/կ Ռ. Սադոյան

քարտուղար Ա.Թովմասյան

Արձանագրություն № 5

Էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոնի 2020թ. դեկտեմբերի 9-ին նիստի:

Ներկա էին Լ.Ավանեսյանը, Վ.Հովհաննիսյանը, Ս.Եղիազարյանը, Ռ.Սադոյանը, Ս.Շողերյան, Ա. Թովմասյանը, Տ. Պողոսյանը:

Օրակարգ

1. Սեզոնային էքսկուրսիաների կազմակերպման հարցը:
2. Քննական առարկաներից կոնսուլտացիաներ կազմակերպելու հարցը:
3. Քննական տոմսերի հաստատում:
4. Առաջին կիսամյակի ընթացիկ ստուգումներ և ինքնուրույն աշխատանքների ամփոփում:
5. Ուսումնական պրակտիկայի ամփոփումը և թղթապանակների պաշտպանությունը:
6. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ

սեզոնային էքսկուրսիաների կազմակերպման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

ամբիոնի վարիչ Ռ.Սադոյան , դոցենտներ՝ Վ.Հովհաննիսյանը, դասախոսներ՝ Ա. Գասպարյանը: Նրանք նշեցին, որ բնապահպանական ցիկլի բոլոր առարկաների արդյունավետ դասավանդման ՀՀ-ի կենսաբազմազանության հետ ծանոթանալու, ուսանողների ճանաչողական ակտիվությունը, ինքնուրույնությունը, ստեղծագործական կարողությունների զարգացումն ու ձևավորումը ապահովելու համար անհրաժեշտ է աշնանը և գարնանը կազմակերպել սեզոնային էքսկուրսիաներ դեպի հանրապետության տարբեր շրջաններ: Անհրաժեշտություն է առաջացել հետաձգել բոլոր տեսակի էքսկուրսիաները կապված հետ:

ՈՐՈՇԵՑԻՆ

ելնելով կորոնավիրուսային իրավիճակից, հետաձգել էքսկուրսիաները և վերականգնել այն հիվանդությունը հաղթահարելուց հետո:

ԼՍԵՑԻՆ

քննական առարկաներից խորհրդատվություններ կազմակերպելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

ամբիոնի վարիչ Ռ.Սադոյանը նշեց, որ ամբիոնում անհրաժեշտ է կազմակերպել հեռավար խորհրդատվություն, որպեսզի յուրաքանչյուր ուսանող հնարավորություն ունենա ցանկացած ժամի դիմելու ամբիոնի դասախոսներին, իրենց հետաքրքրող հարցերի վերաբերյալ խորհրդատվություն ստանալու նպատակով:

ՈՐՈՇԵՑԻՆ

կազմակերպել հեռավար խորհրդատվություններ դեկանատի ներկայացված գրաֆիկի համաձայն:

ԼՍԵՑԻՆ

առաջին կիսամյակի հարցաշարերի քննական տոմսերի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

ամբիոնի դոցենտներ՝ Լ.Ավանեսյանը, Վ.Հովհաննիսյանը, դասախոսներ՝ Ս.Եղիազարյան, և Ռ.Սադոյանը, Ս.Շողերյանը: Նրանք ներկայացրեցին առարկայական հարցաշարերը և քննական տոմսերը: Հարցաշարերը ներկայացված են օնլայն հարթակում:

ՈՐՈՇԵՑԻՆ

ներկայացված հարցաշարերը և տոմսերը լիովին համապատասխանում են առարկայական ծրագրերին և դասընթացներում ընդգրկված թեմաներին:

ԼՍԵՑԻՆ

Ուսումնական պրակտիկայի հաշվետվությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

Ելնելով կորոնավիրուսային իրավիճակից մասնագիտական պրակտիկան անց է կացվել հեռավար, մեթոդիստի կողմից տրվել են հանձնարարություններ և ստուգվել

հեռավար: Մեթոդիստ Լ. Ավանեսյան նշեց, որ պրակտիկայի ընթացքում ուսանողներին հանձնարարվել են թեմաներ , որոնք մշակվել են PP սահիկահանդեսի տեսքով ներկայացվել է հեռավար: ներկայացված թեմաներով կատարվել են քննարկումներ:

ՈՐՈՇԵՑԻՆ

Պրակտիկայի ընթացքը համարել հաջողված:

ԼՍԵՑԻՆ

էլեկտրոնային հարթակում /Classroom/ ամբիոնի վարիչի կողմից դասախոսների ակտիվության գնահատման նախնական ցուցիչների քննարկման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

ամբիոնի վարիչ, պրոֆեսոր՝ Ռ.Սադոյան- 2020-2021 ուս. տարվա 1-ին կիսամյակում որակի վարչության կողմից էլեկտրոնային հարթակում /Classroom/՝ դասախոսների ակտիվության վերաբերյալ պարբերաբար կատարվել է մշտադիտարկում, որոնց արդյունքում մեր ամբիոնը առաջատարներից է եղել և՛ ֆակուլտետում և՛ բուհում: Մինչ այս անցկացված մշտադիտարկումները իրականացվել են հետևյալ ցուցիչների հիման վրա.

- ԱՈՒՄՓ-ի առկայությունը էլ. դասընթացներում
- Դասախոսների շաբաթական ակտիվություն
- Ուսանողների ներգրավվածություն/կցվածություն/ էլ. դասընթացներին
- Հանձնարարության գործիքի կիրառում

Իսկ դեկտեմբերից ավելացել է նաև ամբիոնի վարիչի գնահատականը:

Այս հարցի հետ կապված առաջարկում եմ գնահատման հետևյալ ցուցիչները.

- ԱՈՒՄՓ-ների համապատասխանությունը մասնագիտության բակալավրիական և մագիստրոսականն կրթական չափորոշիչներին,
- Առաջադրանքների և հարցադրումների համապատասխանությունը տրոհված թեմաների,
- Առաջադրանքների և հարցադրումների պատասխանների գնահատման առկայությունը էլեկտրոնային հարթակում:
- Տրոհված թեմաների համապատասխանությունը դասընթացների առարկայական նկարագրերին:

Արտահայտվեցին ամբիոնի մյուս դասախոսները՝ Լ. Ավանեսյանը, Վ. Հովհաննիսյանը, , Ա. Գասպարյանը և այլոք, ովքեր դրական կարծիք հայտնեցին առաջարկված ցուցիչների վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ

Ընդունել ի գիտություն, և հաստատել էլեկտրոնային հարթակում /Classroom/ ամբիոնի վարիչի կողմից դասախոսների ակտիվության գնահատման ցուցիչները:

Ամբիոնի վարիչի պ/կ՝ Ռ.Սադոյան

քարտուղար Ա.Թովմասյան

Արձանագրություն № 6

Էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի 2021թ. փետրվարի 11-ի նիստի:

Ամբիոնի նիստին մասնակցում էին, Ռ.Սադոյանը, Լ.Ավանեսյանը, Վ.Հովհաննիսյանը, Ս.Եղիազարյանը, Ս.Շողերյանը, Ա.Գասպարյանը, Տ.Պողոսյանը, Ա. Թովմասյանը:

Օրակարգ

1. Առաջին կիսամյակի քննությունների և ստուգարքների ամփոփում:
2. Երկրորդ կիսամյակի դասերի կազմակերպումը:
3. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ

Ամբիոնի վարիչ Ռ.Սադոյան հաղորդումը ամբիոնում I կիսամյակում անցկացված ստուգարքների և քննությունների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

դոցենտներ՝ Լ.Ավանեսյանը, Վ.Հովհաննիսյանը, Ս.Եղիազարյանը: Նշեցին, որ ստուգարքով ավարտվող առարկաներից ոչ մի ուսանող չստուգված գնահատական չի ստացել, իսկ քննությամբ ավարտվող առարկաներից 1 ուսանող քննության չի ներկայացել: Ուսանողների կողմից ոչ մի դժգոհություն չի արձանագրվել:

ՈՐՈՇԵՑԻՆ

ստուգարքները և քննությունները անցկացվել են հեռավար, հանգիստ մթնոլորտում[a] ըստ դեկանատի կողմից նշված ժամանակացույցի:

ԼՍԵՑԻՆ

երկրորդ կիսամյակի դասերի կազմակերպման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

ամբիոնի վարիչ Ռ.Սադոյան նշեց, որ բոլոր դասընթացները պետք է դասավանդվեն առարկայական ծրագրերին և չափորոշիչներին համապատասխան: Դասախոսությունները կազմելիս անհրաժեշտ է օգտագործել վերջին տարիներին լույս տեսած մասնագիտական գրականությունն ու գիտության վերջին նորությունները: Կապված կորոնավիրուսային իրավիճակի հետ դասերը կանցկացվեն հեռավար:

ՈՐՈՇԵՑԻՆ

դասերը անցկացնել հեռավար, հարցաշարերը և տոմսերը կազմվել ծրագրերի և դասընթացների բովանդակության համապատասխան:

ԼՍԵՑԻՆ

2020-2021 ուստարվա Էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոնի II կիսամյակի առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների քննարկման, հաստատման և վերահաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

ամբիոնի վարիչ Ռ.Սադոյանը ,Լ. Ավանեսյանը, Վ. Հովհաննիսյանը, Ս. Եղիազարյանը, Ս. Շողերյանը, Ա. Գասպարյանը նշեցին, որ II կիսամյակի բոլոր առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները վերանայվել են և պատրաստ են ներբեռնման:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Բոլոր ներկայացրած առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները երաշխավորել ներբեռնման : Ամբիոնը խրախուսում է ուսանողների կողմից էլեկտրոնային հարթակում իրենց աշխատանքների և ուսուցանվող թեմայի հետ կապված նյութերի ներբեռնումը:

Ամբիոնի վարիչ ժ/պ Ռ.Սադոյան

մասնագետª Ա.Թովմասյան

Արձանագրություն № 7

Էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի 2021թ. մարտի 10-ի նիստի:

Ամբիոնի նիստին մասնակցում էին Ռ.Սադոյանը Լ.Ավանեսյանը, Վ.Հովհաննիսյանը, Ս.Եղիազարյանը, , Ս.Շողերյանը, Ա.Գասպարյանը, Տ.Պողոսյանը, Ա. Թովմասյանը

Օրակարգ

1. Մագիստրական թեզերի, ավարտական աշխատանքների ընթացքի քննարկում:
2. Կուրսային աշխատանքների քննարկում:
3. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ

մագիստրական թեզերի, ավարտական աշխատանքների ընթացքի մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

ամբոինի առկա բակալավրիատում պատրաստվում էր 2 ավարտական աշխատանք , իսկ մագիստրատուրայում 6 մագիստրոսական ատենախոսություն :

Ուսանողները նշեցին, որ ավարտել են փորձարարական աշխատանքները, մշակել են համապատասխան գրականություն և այժմ անցել են ավարտական աշխատանքների շարադրմանը:

ՈՐՈՇԵՑԻՆ

հավանություն տալ կատարած աշխատանքներին և հանձնարարել ուսանողներին, մինչև սույն թվականի ապրիլի 15-ը ավարտել աշխատանքները և ներկայացնեն ամբիոն նախապաշտպանության համար:

ԼՍԵՑԻՆ

կուրսային աշխատանքների ընթացքի վերաբերյալ ղեկավարների ելույթները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

Լ.Ավանեսյանը և Ս.Շողերյանը կուրսային աշխատանքների վերաբերյալ, նշեցին, որ կուրսային աշխատանքները կատարվել են բարձր մակարդակով: Տարբեր կուրսերում ուսանողները ներկայացրել են կուրսային աշխատանքները, քննարկվել են և գնահատվել: Արդյունքները գոհացուցիչ են:

ՈՐՈՇԵՑԻՆ

կուրսային աշխատանքների կատարումը համարել լավ:

ԼՍԵՑԻՆ

Ամբիոնի վարիչ Ռ.Սադոյանը ներկայացրեց օրակարգի 1-ին հարցը, որը վերաբերում է պրոֆեսորադասախառսական և ուսումնաօժանդակ կազմին: Պրոֆեսորը հայտնեց, որ ամբիոնի պրոֆեսորդասախոսական և ուսումնօժանդակ կազմը համապատասխանում է ռեկտորի կողմից հաստատված և գործունեության մեջ դրված հաստիքակազմին: Ամբիոնում աշխատում են 2 գիտությունների դոկտոր, 1 պրոֆեսոր և 5դոցենտ:

ՈՐՈՇԵՑԻՆ

Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ

ամբիոնի վարիչ Ռ.Սադոյանի հաղորդումը ամբիոնի դասախոսների կողմից իրականացվող գիտահետազոտական աշխատանքների վերաբերյալ: Նշեց որ այդ գործընթացում մասնակցում են նաև մագիստրոսական թեզեր և ավարտական աշխատանքներ կատարող ուսանողները: Ամբիոնում կատարվող հետազոտական աշխատանքները արդիական են և արդյունքները տպագրվում են հանրապետական և արտասահմանյան հեղինակավոր ամսագրերում, զեկուցվում են նաև միջազգային գիտաժողովներում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

մ.գ.թ.Լ.Ավանեսյանը, կ.գ.թ.-ներ Ս.Շողերյանը, Ա.Գասպարյանը, դոցենտ Ս.Եղիազարյանը, կ.գ.դ. Ռ.Սադոյանը, Վ.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ

Ընդունել ի գիտություն

ԼՍԵՑԻՆ

Ամբիոնի վարիչ Ռ.Սադոյանի հաղորդումը ամբիոնի պրոֆեսորադասախոսական անհրաժեշտ անձնակազմի մասին՝ ամբիոնի գործունեությունը պատշաճ մակարդակով կազմակերպելու համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

մ.գ.թ.Լ.Ավանեսյանը, կ.գ.թ.-ներ Ս.Շողերյանը, Ա.Գասպարյանը, դոցենտ Ս.Եղիազարյանը, կ.գ.դ.Վ.Հովհաննիսյանը: Նրանք նշեցին, որ մարդկային ռեսուրսները ամբիոնում դրսևորվելու քիչ հնարավորություններ ունեն, որովհետև ամբիոնը չունի անհրաժեշտ սարքավորումներ լաբորատորիայի համար: Դասախոսները հետազոտական աշխատանքները ուսանողների ավարտական աշխատաքներն ու մագիստրոսական թեզերը կատարելու համար համագործակցում են ԳԱԱ-ին համապատասխան գիտահետազոտական ինստիտուտների և լաբորատորիաների հետ:

ՈՐՈՇԵՑԻՆ

Ընդունել ի գիտություն:

Ամբիոնի վարիչ ժ/պ Ռ.Սադոյան

քարտուղար՝ Ա.Թովմասյան

Արձանագրություն 8

Էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոնի

2021 թ. ապրիլի 15 –ի թիվ 8 նիստի

Ամբիոնի նիստին մասնակցում էին Ռ.Սադոյան Լ.Ավանեսյանը, Վ.Հովհաննիսյանը, Ս.Եղիազարյանը, Ա.Գասպարյանը, Ս.Շողերյանը, Ա.Թովմասյանը **:**

Օրակարգ՝

1. Պետական քննությունների հարցաշարի հաստատում:
2. Պետական քննական առարկաների խորհրդատվությունների կազմակերպում:
3. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ՝

պետական քննությունների հարցաշարի հաստատման հարցը:

²ՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

ամբիոնի վարիչ Ռ.Սադոյանը ներկայացրեց կազմված պետական քննական հարցաշարը, նշեց որ հարցաշարի մեջ ընդգրկված են էկոլոգիական և բնապահպանական ցիկլի բոլոր դասընթացների հարցաշարերը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

հավանություն տալ կազմված հարցաշարին և այն ներկայացնել դեկանատ:

ԼՍԵՑԻՆ՝

պետական քննական առարկաների խորհրդատվությունների կազմակերպման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏԵՑԻՆ՝

ամբիոնի վարիչ Ռ.Սադոյան նշեց, որ անհրաժեշտ է ամբիոնում սահմանել դասախոսների հերթապահություն, ավարտական կուրսերի ուսանողների հարցերին պատասխանելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

խորհրդատվությունների համար սահմանել հստակ գրաֆիկներ և ըստ այդ գրաֆիկների էկոլոգիական և բնապահպանական ցիկլի բոլոր դասընթացների համար անց կացնել խորհրդատվություններ:

ԼՍԵՑԻՆ-

Բակալավր առկա բակալավրիատի ավարտական աշխատանքների , և մագիստր 2-րդ կուրսի թեզերի նախապաշտպանությունը: Ուսանողները ներկայացրեցին իրենց կատարած աշխատանքները PP ծրագրով:

Առկա բակալավր IV կուրս

3. Ազատ գետի ավազանի դեղաբույսերը:

Կատարող – Խաչատրյան Անուշիկ Աշոտի

Ղեկավար - Արմեն Գասպարյան

4. Սևանա լճի ավազանի ջրա-ճահճային թռչունների կենսաբազմազանությունը և էկոլոգիան:

Կատարող – Խաչատրյան Մարինե Սարգսի

Ղեկավար - Վարուժան Հովհաննիսյան

Մագիստրատուրա II կուրս

7. Սևանա լճի էկոլոգիական բնութագիրը և դինամիկան էկոլոգիական կրթության համատեքստում:

Դասախոս՝ Վ. Հովհաննիսյան

Ուսանող՝ Հարությունյան Մերի Ռուբենի

8. Կրտսեր դպրոցականների էկոլոգիական մշակույթի ձևավորման առավել արդյունավետ ուղիներն ու միջոցները:

Դասախոս՝ Լ.Ավանեսյան

Ուսանող՝ Մելիքյան Ալիսա Արամայիսի

9. Արարատյան հարթավայրի գերխոնավ տարածքների ողնաշարավոր կենդանիները

Ղեկավար՝ Վ.Հովհաննսիյան

Ուսանող՝ Պարունակյան Լևոն Կարենի

10. Կենդանիների ընտանեացումը մարդու կողմից:

Ղեկավար՝ Վ. Հովհաննիսյան

Ուսանող՝ Ավետիսյան Նիկոլայ Հակոբի

11. Սննդային հավելումների հիմնախնդիրը դպրոցականների սննդակարգում:

Դասախոս՝ Լ.Ավանեսյան

Ուսանող՝ Մինասյան Ժաննա Բաբկենի

12. <<Մտավոր ծանրաբեռնվածության ազդեցությունը ուսանողների սիրտ-անոթային համակարգի և ֆիզիոլոգիական որոշ ցուցանիշների վրա>>:

Դասախոս՝ Ս.Շողերյան

Ուսանող՝ Անիկյան Դիաննա Կամոյի

²ՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

ամբիոնի վարիչ Ռ.Սադոյանը, ամբիոնի դասախոսներ Լ.Ավանեսյանը, Վ.Հովհաննիսյան, Ա.Գասպարյանը, Ս.Եղիազարյանը: Արվեցին դիտողություններ : Նշեցին, որ ուսանողների կողմից կատարած աշխատանքները արդիական են, բխում են կրթական համակարգի ժամանակակից պահանջներից, հիմնավորված են և փաստարկված : Օգտագործված գրականության աղբյուրները արդի են և համապատասխանում են թեմաներին: Աշխատանքները շարադրված են գրագետ, հետազոտության արդյունքները ամփոփված են եզրակացության մեջ: Ներկայացված են առանցքային առաջարկություններ: Աշխատանքի դրույթները և եզրակացությունները բխում են նպատակից և առաջադրված խնդիրներից:

ՈՐՈՇԵՑԻՆ

հանձնարարել ուսանողներին , շտկել արված թերությունները և ներկայացնել պաշտպանության:

ԼՍԵՑԻՆ

Շրջակա միջավայրի գիտություններ բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի Դիաննա Անիկյանի <<Մտավոր ծանրաբեռնվածության ազդեցությունը ուսանողների սրտային ռիթմի և հիշողության գործընթացների վրա >> թեմայով մագիստրոսական թեզի վերնագրում փոփոխություններ կատարելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

մագիստրոսական թեզի ղեկավար Ս.Շողերյանը: Նա նշեց, որ փորձարարական աշխատանքի տվյալների վերլուծության արդյունքում առաջացել է թեզի վերնագրի մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն :

ՈՐՈՇԵՑԻՆ

Դիաննա Անիկյանի մագիստրոսական թեզը հաստատել <<Մտավոր ծանրաբեռնվածության ազդեցությունը ուսանողների սիրտ-անոթային համակարգի և ֆիզիոլոգիական որոշ ցուցանիշների վրա>> վերնագրով:

Նիստի նախագահ՝ Ռ.Սադոյան

քարտուղար՝ Ա.Թովմասյան

Արձանագրություն N 9

էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոնի

2021թ. մայիսի 17–ի նիստի

Ամբիոնի նիստին մասնակցում էին Ռ.Սադոյանը, Լ.Ավանեսյանը, Ա.Գասպարյանը, Վ.Հովհաննիսյանը, Ս.Եղիազարյանը, Ս.Շողերյանը, Ա.Գասպարյան , Ա.Թովմասյանը:

Օրակարգ՝

1. Ուսումնական պրակտիկայի կազմակերպման նախապատրաստական աշխատանքներ:
2. Երկրորդ կիսամյակի ստուգարքների և քննությունների կոնսուլտացիաների կազմակերպում
4. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ

Ուսումնական պրակտիկաների կազմակերպման նախապատրաստական աշխատանքների հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

ամբիոնի վարիչ Ռ.Սադոյանը, դոցենտներ՝ Լ.Ավանեսյանը, Վ. Հովհաննիսյանը, դասախոսներ Ռ.Սադոյանը, Ա.Գասպարյանը, Ս. Շողերյանը : Նշեցին, որ ուսումնական պրակտիկայի կազմակերպման համար կազմվել է պլան, ըստ որի նախատեսել են ճանաչողական էքսկուրսիաներ դեպի Հրազդանի կիրճ, Ստեփանավանի §Դենդրոպարկ¦, հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն, Բուսաբանական այգի, բնության թանգարան, ջրերի մաքրման կայան և դեպի Սևանա լիճ և Որորների արգելոց:

ՈՐՈՇԵՑԻՆ

հավանություն տալ պլանով նախատեսված բոլոր աշխատանքներին և հաստատել ներկայացված պլանը:

ԼՍԵՑԻՆ

ամբիոնի վարիչ Ռ.Սադոյանի հաղորդումը 2-րդ կիսամյակի ստուգարքների և քննությունների կոսուլտյացիաների կազմակերպման մասին: Ռ.Սադոյանը նշեց, որ բոլոր քննական առարկներից անհրաժեշտ է կազմակերպել կոնսուլտացիներ համաձայն դեկանատի ներկայացված դեկանատի ամբիոնում սահմանել

դասախոսների հերթապահություն, ուսանողների հարցերին պատասխանելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ

կոնսուլտացիաների համար սահմանել հստակ գրաֆիկներ և ըստ այդ գրաֆիկների էկոլոգիական և բնապահպանական ցիկլի բոլոր քննական դասընթացների համար անց կացնել կոնսուլտացիաներ:

ԼՍԵՑԻՆ

ՀՀ ԳԱԱ գիտական կենտրոնների պայմանագրերի հետ ունեցած հարցը.

²ՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

ամբիոնի վարիչ Ռ.Սաղոյանը, հանձնարարեց ՀՀ ԳԱԱ գիտական կենտրոնների հետ ունեցած բոլոր պայմանագրերը վերանայել, նոր ուսումնական տարվա համար կնքել նոր պայմանգրեր.

ՈՐՈՇԵՑԻՆ

ընդունել ի գիտություն:

Նիստի նախագահ՝ Ռ.Սաղոյան

քարտուղար՝ Ա.Թովմասյան

Արձանագրություն N 10
էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոնի 2021թ.
Հունիսի 12-ի նիստի

Ամբիոնի նիստին մասնակցում էին Ռ.Սադոյանը, Լ.Ավանեսյանը, Ա.Գասպարյանը, Վ.Հովհաննիսյանը, Ս.Եղիազարյանը, Ս.Շողերյանը, Ա.Գասպարյան , Ա.Թովմասյանը:

Օրակարգ՝

1. Ստուգարքների և քննությունների արդյունքների ամփոփում:
2. Պետական քննությունների արդյունքների ամփոփում:
3. Ամբիոնի հաշվետվության կազմում:
4. 2021-2022ուս. տարվա ծավալի կազմում:
5. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ

երկրորդ կիսամյակի ստուգարքների և քննությունների ամփոփման հարցը:

Արտահայտվեցին

ամբիոնի վարիչ Ռ:Սադոյան դոցենտներ՝ Լ.Գ. Ավանեսյանը, Վ. Հովհաննիսյանը, դասախոսներ Ս. Եղիազարյանը, Ս. Շողերյանը: Նշեցին, որ ստուգարքները և քննությունները բոլոր ֆակուլտետներում կազմակերպվել են ըստ դեկանատների կողմից կազմված գրաֆիկների: Ստուգարքներից չներկայացված ուսանողներ չկան: Քննությունները նույնպես անցել են կազմակերպված: Անբավարար ստացող ուսանողներ չկան:

ՈՐՈՇԵՑԻՆ

երկրորդ կիսամյակի ստուգարքները և քննությունները համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ

պետական քննությունների ամփոփման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ

ամբիոնի վարիչ Ռ.Սադոյանը, դոցենտներ Լ. Ավանեսյանը, և Վ. Հովհաննիսյանը: Նշեցին, որ „Շրջակա միջավայրի գիտություններ“ մագիստրատուրա բաժնի 6 և առկա բակալավրիատի 2 ուսանողներ ներկայացել են մագիստրոսական

ատենախոսություններ և ավարտական աշխատանքներ, հաջողությամբ պաշտպանել են և ստացել լավ և գերազանց գնահատականներ:

Անբավարար գնահատական ստացող ուսանող չի եղել :

ՈՐՈՇԵՑԻՆ

պետական քննության արդյունքները համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ

2021-2022 ուս. տարվա ամբիոնում կատարված աշխատանքների հաշվետվությունը:

ԱՐՏԱՀԱՅՏԵՑԻՆ

ամբիոնի վարիչ Ռ.Սադոյանը: Նա նշեց, որ ընթացիկ տարում ամբինում աշխատել են 6 դասախոսներ, որոնց ուսումնական ծանրաբեռնվածությունը համապատասխանում է կանոնակարգով հաստատված ժամաքանակին: Ամբիոնի դասախոսները բարեխղճորեն առանց բացթողումների կատարել են իրենց բոլոր պարտականությունները: Ամբիոնում անց են կացվել 10 ամբիոնի նիստեր, որտեղ քննարկվել են պլանով նախատեսված և ընթացիկ հարցերը: Նշվեց, որ քննաշրջանները անց են կացվել , կազմակերպված և բարձր մակարդակով: Անց են կացվել խորհրդատվություններ, դասախոսություններ, սեմինարներ, քննարկումներ: Ուսումնական պրակտիկան Ամբիոնը հաշվետու տարում իրականացրել է հետազոտական գործունեություն, ուսումնական, մմասնագիտական պրակտիկաներ: Դրանք կազմում են ամբիոնի աշխատանքների հիմնական մասը, որոնք անցկացվում են ՀՀ ԳԱԱ լավագույն գիտահետազոտական կենտրոններում և ղեկավարվում բազմաթիվ տարիների փորձ ունեցող դասախոսների կողմից: Ամբիոնում անց են կացվել գիտական սեմինարներ: Հաշվետու տարում ամբիոնը ներքին շահակիցների ներգրավվածությամբ (ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական) կազմակերպել է գիտ-արշավ Բյուրականի անտառ-Ամբերդ երթուղով Երևանի բուսաբանական և կենդանաբանական այգիներ, բնության թանգարան, ԱԻՆ, Ջրերի մաքրման կայան, ՀՀ ԱՆ նարկոլոգիական կենտրոն:

ՈՐՈՇԵՑԻՆ

ամբիոնի աշխատանքները գնահատել լավ և ընդունել ներկայացրած հաշվետվությունը:

ԼՍԵՑԻՆ

2021-2022 ուս. տարվա ամբիոնի ծավալի կազմման հարցը: Ամբիոնի վարիչ Ռ.Սադոյանը ներկայացրեց ընթացիկ ուս. տարվա ամբիոնի ժամաքանակը: Նա նշեց, որ էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոնի 2021-2022 ուս.տարվա ժամաքանակը կազմում է 4705 ժամ:

ՈՐՈՇԵՑԻՆ

ամբիոնի 2021-2022 ուս. տարվա ուսումնական աշխատանքների ծավալը կարելի է ներկայացնել հաստատման:

Նիստի նախագահ՝ Ռ.Սադոյան

Քարտուղար՝ Ա.Թովմասյան